ԽՈՀԵՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿ

Գրիգոր ԳՈՒՐԶԱԴՅԱՆ, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս

[illegible]

Այս վտանգավոր երևույթի [illegible] կարելի է միայն մի ձևով. [illegible] ֆիլտր [illegible] Հավանորեն, այդ ֆիլտրը պետք է սահմանի ինքը ակադեմիան։ Միայն նրանք, ովքեր կանցնեն նման ֆիլտրով, իրավունք կունենան տեսնել իրենց ազգանունները [illegible] հավակնորդների ցուցակներում և մասնակցել [illegible] ընտրություններին։ Որպես ֆիլտր կարելի է օգտագործել ակադեմիայի բոլոր վեց գիտական բաժանմունքներում անցկացվող ընտրությունների երեք փուլերից առաջինը։ Պաշտոնական հավակնորդ է դառնում միայն նա, ով առաջին փուլն անցնելուց, [illegible] «ֆիլտրվելուց» հետո կհավաքի ձայների առնվազն կեսը և կանցնի երկրորդ փուլ։ Երրորդ և վերջին փուլը կգնա միայն նա, ով երկրորդ փուլում հավաքել է ձայների կեսից ոչ պակաս։ Ակադեմիկոս կամ թղթակից անդամ դառնալու համար հարկավոր է առաջվա պես հավաքել ձայների երկու երրորդը։ Ասվածից հետևում է նաև, որ հավակնորդների փաստական հրապարակային քննարկումը կարող է իրականացվել միայն «ֆիլտրով» անցածների նկատմամբ, ուստի և պետք է պահպանվի, ինչպես առաջ էր, մեկ ամսվա ժամանակահատվածը՝ հավակնորդների ցուցակի հրապարակման և ընտրությունները անցկացնելու օրվա միջև։

Անհնարին է հասնել ընտրությունների խառնաշփոթը ակադեմիայում, առանց խստացնելու հավակնորդների ներկայացման կարգը։

* * *

Անկասկած, լուրջ վերանայման կարիք ունի նաև ակադեմիկոսների և թղթակից անդամների վերջնական ընտրության ներկա կարգը։ Ըստ այդ կարգի վերջին խոսքը պատկանում է՝ բոլոր գիտությունների և բոլոր բաժանմունքների համար, ընդհանուր ժողովին, որտեղ փակ քվեարկությանը մասնակցում են միայն ակադեմիկոսները և նրանք էլ որոշում են՝ հաստատել կամ մերժել բաժանմունքով անցած հավակնորդին։ Դա ճիշտ կարգ չէ։ Միշտ չէ, երբ ակադեմիկոս-կենսաֆիզիկոսը տնօրինում է մաթեմատիկոսի բախտը՝ ոչինչ չհասկանալով մաթեմատիկայից։ Այդ կենսաֆիզիկոս-ակադեմիկոսը կարող է ակամա գործիք դառնալ քանտարկությունների և հաշիվների՝ զրկել մի օժտված ու վաստակաշատ մաթեմատիկոսի ակադեմիկոս դառնալուց, հակառակ այն բանին, որ բաժանմունքի բոլոր մաթեմատիկոսները գտնում են նրան միանգամայն արժանի դրան։

Հավանորեն, այստեղ պետք է մտածել մասնատված կամ դիֆերենցված մոտեցում ցուցաբերելու մասին։ Այսպես, [illegible]

Ընտրությունների ներկա կարգը՝ նախ բաժանմունք, ապա ընդհանուր ժողով, պետք է պահպանել, թերևս, միայն մեկ բնագավառի՝ հասարակական գիտությունների համար։

* * *

Չի կարող չմտահոգել ընտրված ակադեմիկոսների և թղթակից անդամների այսպես ասած «սոցիոլոգիական» կազմը. պարզվում է, որ նրանց մեջ մեծամասնությունը՝ որպես կանոն, եթե ոչ ավելին, դիրեկտորներ են կամ պաշտոնատար անձինք։ Դա այդ է ծավալում, ի վերջո, գիտական տեսակետից անցած հավաստ պաշտոններում դիրեկտորական աթոռը միշտ էլ ուժ է, լայն կապեր, հետևաբար և ճնշում գործադրելու ավելի հավաստ առավելություն իր մրցակցի նկատմամբ։ Անցած ընտրություններում բանը հասավ անհարկի գործողությունների. ակադեմիական տեղեր էին բացված նախապես հասցեագրված՝ որոշակի դիրեկտորների համար։ Եվ սուգ ու շիվան սարքվեց, երբ այդ «նշահարված» դիրեկտորներից ոմանք, հակառակ գործադրված անօրինակ ջանքերին, այդպես էլ չընտրվեցին ակադեմիկոս կամ թղթակից անդամ։ Եթե դիրեկտորը, իրոք, լավ գիտնական է, ապա ինչու նա չի ընտրվել ակադեմիայի անդամ մինչև այդ, երբ նա դիրեկտոր չէր դեռ։ Դժվար չէ գտնել մի այլ օրինաչափություն ևս. նախկին դիրեկտորները՝ դիրեկտորության ընթացքում էլ մի կերպ թղթակից անդամ դարձած, շատ արագ են դառնում ոչ գիտնական, չզբաղվելով անգամ իրենց շրջապատից ո՛չ գիտական արգասաբերությամբ և ո՛չ էլ հատկապես մանկավարժական։

Դիրեկտորներին ու պաշտոնատար «գիտնականներին» ամեն գնով ակադեմիական պատվավոր հասցնելու մարմաջը գալիս է, ի վերջո, ակադեմիայի ղեկավարությունից։ Նաև «վերևից»։ Այս հարցում իրենց փութաջանության մեջ «փայլեցին» հատկապես որոշ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները։ Առաջներում այս երևույթը չէր կրում սուր բնույթ, բայց գնալով այն սաստկացավ։ Դա վտանգավոր երևույթ է, այն կարող է հասցնել քայքայման ու մեռցնել ակադեմիայի հեղինակությունը։ Առավոտից երեկո բյուրոկրատական գրագրության մեջ թաղված դիրեկտորը (ցավոք, այդպիսին է մեր իրականությունը), չի կարող հավակնել արգասաբերության՝ գիտության անդաստանում։ Իսկ օրն ի բուն լաբորատորիայում տքնող ճգնավորը նախապես գիտե արդեն իր ձախողումը գալիք ընտրու- [illegible]

միևնույն է, նա չի հանդուրժի [illegible] իր գլխավորած ինստիտուտում— այդպես ավելի հանգիստ է, գլխացավանքից հեռու։ Նա չի փորձի, [illegible], ներգրավել խոստումնալից ուժեր այստեղից, այնտեղից։ Ու [illegible] սկսում է առավել միջակությունը։ Այդպիսի դիրեկտորին ո՛չ ոք ձեռք չի տա։ Համենայնդեպս, ինձ հայտնի չէ թեկուզ մի դեպք, որ դիրեկտորին պաշտոնից [illegible] միջակության հասցնելու, այն պաշտոնյաների ու բախտախնդիրների հավաքատեղի վերածելու համար։

Այս ամենից հետո՝ զարմանք ու տարակուսանք, թե ինչու է մեր գիտությունն այնքան հեռու միջազգային մակարդակից։

Հարցրեք դիրեկտորներին։

Արդ, մտածե՞լ է, արդյոք, ակադեմիան իր առաջ դնել այդ խնդիրը. ինչպիսի՞ն պետք է լինի դիրեկտորը, որպեսզի գիտական կենտրոնը գիտական կենտրոն դառնա։

* * *

Հանրահռչակ ֆիզիկական լաբորատորիայի դիրեկտոր էր և գիտության լիդեր, այն էլ ի՜նչ լիդեր, Ռեզերֆորդը։ Բայց նա ոչ միայն չփորձեց խանգարել երիտասարդ Կապիցային, որի գիտական հետաքրքրությունները հեռավոր չափով իսկ չէին առնչվում Ռեզերֆորդին այն ժամանակ զբաղեցնող ատոմային պրոբլեմներին, այլ անում էր ամեն ինչ՝ նրան բոլոր հնարավոր ու անհնարին ձևերով սատար դառնալու։ Արդյունքը՝ հանձին Կապիցայի ստեղծվեց մի նոր ուղղություն ֆիզիկայում, որը և գնաց ու հիմա էլ գնում է աշխարհով մեկ։

Ռեզերֆորդին փոխարինեց, նրա մահից հետո, Բրեգը, ու նա— ահա՛ սխրանքը— չգնաց իր հանճարեղ նախորդի ուղիով։ Հետևա՞նքը. աշխարհը շատ չանցած ստացավ [illegible] բում Ուոտսոնն ու Կրիկն և [illegible] Ռայլ. առաջինները հաղորդեցին գենը, [illegible] կենտը թերևս մարդկության պատմության ողջ գործունեության, իսկ վերջինը հեղաշրջեց ռադիոաստղաֆիզիկան։ Ի դեպ, հիշյալ բոլոր վեց անունները էլ դարձան Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, ի թիվս երկու տասնյակից ավելի Նոբելյան դափնեկիրների, որոնք ճայթեցին ինչպես [illegible]՝ Ռեզերֆորդի հիմնած լաբորատորիայից։ Ահա ի՛նչ է նշանակում դիրեկտոր, գիտական լիդեր, իսկ մեծ հաշվով՝ գիտության կազմակերպում։

Իսկ ինչ է կատարվում մեզ [illegible]

Ակադեմիան պետք է հասկանա վերջապես, որ գիտության առաջընթացի ամենամեծ թշնամին պահպանողականությունն է, մի տեղում խմորված անշարժ դոփելն է։

* * *

Զարմանալիորեն լայնացել է ակադեմիական ընտրությունների հավակնորդներ ներկայացնող կազմակերպությունների շրջանակը։ Բանը հասնում է անհեթեթության դեպքերի։ Ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքում ընտրությունների առաջին օրը պարզվեց, որ մեր աստղագետներից մեկը Բյուրականի աստղադիտարանի գիտական խորհրդի կողմից մերժում ստանալուց [illegible] հետո կարողանում է, [illegible] վերջին պահին [illegible] կոչվել «Գիտելիք» [illegible] կողմից, մի արտադրական կազմակերպության (Գյումրի), որտեղ ոչ միայն չկա գոնե մեկ աստղաֆիզիկոս, այլև գիտություն՝ ընդհանրապես։ Ինչպես և պետք էր սպասել, այդ հավակնորդը դուրս մնաց բաժանմունքում քվեարկության առաջին իսկ փուլից, չհավաքելով ձայների նույնիսկ մեկ քառորդը։

Պարզ է, որ ակադեմիան պետք է ունենա մի որոշակի դրվածք, սկզբունք ոչ միայն կանոնների մասնագիտական առումով, այլև ոչ իրավական և ոչ լիարժեք ներկայացվածությունների քննարկումը [illegible] ակադեմիայի ներսում, այլև մերժելու դրանց ընդունումը իսկ սկզբից ևեթ, որպեսզի բոլոր չարիքի աղբյուրին [illegible] թյուն, երբ, ասենք, Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական խորհուրդը որոշի ակադեմիա [illegible]

Սա դեռ բոլորը չէ։ Ակադեմիան չի լուծել, պարզապես տարիներ շարունակ աչքաթող է արել մի ամբողջ շարք հարցեր, կենսականորեն անհրաժեշտ ու անմիջապես առնչվող գիտական արդյունավետության հետ։

Այսպես, մեր ակադեմիան մինչև հիմա չունի իր տպարանը, այն, ինչ կա հիմա, անհարմար է անգամ գարեջրի պիտակներ տպելու համար։ Եվ [illegible] միայն շատացել է այն գիտնականների թիվը, որոնք ասես ինչ են անում իրենց մենագրությունները ու աշխատությունները տպագրելու համար։ Էլ չենք խոսում այն մասին, որ առաջ [illegible]

Ակադեմիան մինչև հիմա չունի [illegible] Գիտնականի տուն, չի կազմակերպել ակադեմիայի գիտաշխատողների ամենօրյա աշխատանքային հոգսերը, գործունեությունը [illegible] ինչ թեթևացնող միջոցառումները։

Ակադեմիան չի լուծել թերևս ամենակարևորը՝ բնակարանային պրոբլեմը։ Թող ինձ ներեն ասեն, բայց գոնե [illegible] մի քանի խոշոր շենք, հատուկ [illegible] բարձրացված, [illegible] կյանքի [illegible] (շուրջ [illegible]) և մոտ [illegible]

Բայց նախ լինենք արդար ու շատ չմեղադրենք այս թվարկված ու չթվարկված բացթողումների համար միայն ակադեմիայի ղեկավարությանը։ Այստեղ մեղավորության մեծ մասն ընկնում է, անկասկած, մեր հանրապետության ղեկավարության վրա։ Ակադեմիայի ղեկավարությունը հոգնել է ահա այսպես տարիներ շարունակ աղերսելուց [illegible]

[illegible]

Հիշենք, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան ստեղծելու պահին՝ 1943 թվին, մենք ըստ էության չենք ունեցել ճշգրիտ գիտություններ, չենք ունեցել կամ էլ [illegible] դեպքում կազմավորման փուլում էին նրանք մեր ֆիզիկան, մաթեմատիկան, մեխանիկան, իսկ մեր վերջին աստղագետը Անանիա Շիրակացին է եղել, հազար երեք հարյուր հիսուն տարի առաջ։ Դրանով հանդերձ, [illegible] Հովսեփ Օրբելին հիմնադրեց Հայաստանի ակադեմիան բնավ ոչ դատարկ տեղում. կար արդեն պատմական հիմք՝ շատ ամուր, հուսալի. դա մեր գրքերը լեզվաբանությունը ու լեզվագիտությունն էր, դարերի խորքից եկող մեր վիպասանի պատմագիտությունն էր, համաշխարհային ճանաչման հասած մեր միջնադարյան պոեզիան էր, տիեզերական ընդգրկումներ ունեցող մեր փիլիսոփայությունն էր, այն ամենը, ինչը բերել էր մեր ժողովրդի ճանաչումը, նրա առանձնահատուկը։

Հիմա վիճակն այլ է. քառասունհինգ տարիների ընթացքում մեր մյուս երախտավորը՝ Վիկտոր Համբարձումյանը անօրինակ ջանքերի գնով, առանց ուղղակի՝ կյանքի գնով ակադեմիան ակադեմիա դարձրեց. մենք ունենք հիմա հզոր ճշգրիտ ու բնական գիտություններ, ունենք աշխարհ [illegible] մաթեմատիկա, այլ չափ բազմազան ու բազմաճյուղ ֆիզիկա, ինքնատիպ ու հույժ ժամանակակից մեխանիկա, ունենք այս աղքատիկ երկրի աղքատիկ պայմաններում կազմավորվող, բայց և խիստ խոստումնալից փորձարարական կենսաբանություն՝ իր բոլոր տարատեսակներով, իսկ աստղաֆիզիկայի մասին թող խոսեն ուրիշները։ Ճշգրիտ ու բնական գիտությունների այս խայտաբղետ բազմությունն ունի արդեն ամենակարևորը՝ հստակ պատկերացում իր անցյալի [illegible] ու իր անցնելիք ճանապարհի— նրանք այսուհետ կգնան տարից գլորվող ձնագնդի ուժգնությամբ։ Կգնան, կարող ենք չկասկածել, ըն- [illegible]

Ինչո՞ւ ենք մենք [illegible]

Ո՞ւմ է պետք այդ երկչոտությունը, այդ անկենդանությունը, զգուշությունը, ինչ-ինչ հանգամանքներ «հաշվի առնելու» ճղճիմ հոգեբանությունը ու վերամբարձ հոխորտանքը խնտապահանջության։ Տեսեք ի՛նչ է անում մեր այս անպատկառ, անկիրթ, երիցս ճղճիմ հարևանը՝ իր ակադեմիայի ակադեմիկոս է դարձրել, առանց երկար-բարակ մտածելու, իր խուժանին՝ գիտական մի ակնհայտ անբարեխղճություն, երբ չունենք ավելին, որի անունն է [illegible]։ Գոնե ունենայինք փոքր-ինչ ինքնասիրություն՝ աշխարհի առաջ ծիծաղելի չդառնալու համար։ Շարունակելով վարվել այս կերպ, մենք չե՞նք [illegible] մեր չարաճճի համար, չե՞նք ապրի խղճի խայթ մեր ավելորդ, անտեղի ու անիմաստ մտմտուքների համար, մեր ներքին [illegible] համար, ինչպես դա եղավ, ցավոք, երբ այդպես էլ փակ մնացին ակադեմիայի դռները մեր հանճարեղ մտածողի՝ Պարույր Սևակի առաջ, մեր ինքնուրույն Հովհաննես Շիրազի առաջ, մեր այն դրդալից երևույթի առաջ, որին այդպես էլ կոչում էինք՝ Մինաս։ Ակադեմիայի դռները պետք է միշտ լայն բացված [illegible] խենթերի [illegible], քանզի նրանք են [illegible] ու հղկում մեզ [illegible] ու [illegible] ժառանգականությունը ժողովրդի... Ապրելու կեսն էլ պատվով մնալն է...